

ԱԶԳԱՅԻՆ

ԱՏՎԱԴԱՆՉՈՒԹԵԱԼ ՄԱՐԻԱՄԱՅ
Յ. ՅՈՒՅՆԵԱՅՆ ԵՎ ՄԱՐԻԱՄԵՅԸ ՅՈՎԵԱՅՆԵՅ
ԳՊՐՈՅ ՕՐԵՈՐԴ-Օ.Յ.

Արժանայիշատակ Տ. Մարիամ Յովհաննիսեան Յօնանեանց կտակած լինելով ի Տփխիս Հայոց Ա. Ստեփաննոսի Կունանաց Անապատին մօտ մի գպրոց հիմնել Հայոց օրիորդաց գաստիարակութեան եւ ուսումնառութեան համար, նորա ամուսին Վահեմափայլ եւ Աղքասէր Պ. Յովհաննէս Յօնանեանց՝ — որ բարեհոչակ եւ բազմարդիւն Հայոց մէջ նշանաւոր գիրք կվայելէ եւ ի ներկայիս Հայաստանէայց սխրագործ բարերարներէն մին կհանդիսանայ, — ուետք եղած պատրաստութիւնքը հոգալով՝ այս ինքն գպրոցի շէնքը՝ գրամագլուխը՝ միանգամայն տնտեսական՝ կառավարչական եւ կրթական վարչութեանց կազմակերպութիւնը անօրինելով, հետագայ գրութեամբ Վ. Հ. Հայրապետի օրհնութիւնը եւ կարեւոր տնօրէնութիւնքը խնդրած էր, եւ Նորին Սրբութիւն յառուել օրհնութեան Կոնգակով Հայուստաելով յիշեալ կտակը եւ գպրոցի հիմնական ծրագիրը՝ միանգամայն գպրոցական շինուածքին յանուն Ա. Սունեփաննոսի անտապատին կալուածագրի պարագաներու գրինական միջոցը ընդունեց, եւ յառաջակայ Հոկտեմբեր ամառ սկիզբներում կամօքն Աստուծոյ գպրոց պիտի բացուի:

Վեհ. Հայրապետի Առնդակը շատ
գեղեցիկ պարզած լինելով համբուցեալ
Տիկնոց եւ Պ. Յօնանեանցի կտակի եւ
նպատակին վսեմութիւնը եւ ազգօգուտ
կարեւորութիւնը՝ Պ. Յօնանեանցի դը-
րութենէն զինի՝ Նորին Սրբութեան
Կռնդակը եւս կհրատարակեմք:

Ա.Հաւատիկ Պ. Յօնահնեանցի դրութիւն:

4. бъл. ФИО- 2003РД.ФтS.

«Հովուապետական ճգունքը Զերոյին
Վեհափառութեան առ ի բարւոքել եւ
ի բազմապատկել զգպրցու եկեղեցեաց
եւ վանորէից ի մտաւոր եւ կրօնա - բա-
րոյական կրթութիւն որդւոց Հայա-
տանեաց եկեղեցւոյ՝ յորդոր եղեն ինձ
փութալ կատարել զվերջին կամս ա-
մուսնոյ խմոյ Մարիամայ Յովհաննիսեան
Յօնանեանց, որով աւանդեաց ինձ հան-
գուցեալն կանգնել ի յիշատակ իւր
գործոց վասնօրիորդաց Լուսաւորչական
Հայոց, յատկապէս ի պէտս որբոց եւ
դստերց չքաւոր ծնողաց»

«Ամուսինն իմ գոլով ջերմեռանդ Քը-
րիստոնեայ եւ անձնանուէր գուստը ա-
ռաքելական հայրենի սուրբ Եկեղեց-
ւոյ մերոյ՝ համակեալ էր ի ներքին հա-
մոզումն յայն թէ՝ քանզի կրօնն ան-
բաժանելի իմն եղանակաւ շաղկապեալ
է ընդ բարոյականին, ուստի որպէս առ-
երջանկութիւն իւրաքանչյիւր անհատի
ուրոյն ուրոյն, նոյնպէս եւ վասն բարօ-
րութեան հասարակաց հարկ անհրա-
ժեշտ է զի ընդ մոտաւորականին համա-
զոյդ լիցի եւ կրօնականն զարգացումն»

«Հասու լեալ նորա՛թէ լոկ ուտմամքն Աստուածային բանիցն չէ հնար մարդիկ ի կրօնական զգացմունոն, այլ պարտ է է նոպատել այնմ՝ ուղղութիւն եւ ներքին կեանք կրթարանին, ոյր վասն ցանկայր հանգուցեալ ամսւափնն իմ՝ զի գպրացն օրիորդական, որ ի յիշատակ իւր կառունցի ի Տփիւս առ կռւսանոցան Հայոց, լիցի նա ընդ անմիջական բարոյական ագրեցութեամքն նուիրական պաշտօնէ իցն Աստուծոյ եւ տաճարի նորին որբոյ»:

«Պարտաւոր զանձն իմ համարեալ առ ի կատարել զիամս հանգուցեալոյն եւ համաշաճ գաեալ մտաց եւ նոպատակի քարենախանձ դիտաւորութեանց նորին՝ այժմէն իսկ նուիրեմ՝ յօդուտ կռւսատանին Տփիւսաց, որ յանուն Սրբոյն Սուփաննոսի, զքարաշէն եռայարկ տունն իմ, որ առընթեր գտանի այնք վասնուց ի նեչըրուզեան անու անեալ փոշոցի հանդերձ վերաբերեալ նմին զեանուլ՝ հետեւեալ պայմանօք»:

Ա. Զի ի նոյն տան հիմնարկեացի զբուրոց օրիորդական, եւ ի յիշատակ ամսւանոյ իմոյ՝ անուանես յի «Մարիամեան Յօնանեանց գոլրոց օրիորդաց»:

Բ. Զի գոլրոցն այն ենթարկեացի միշտ ընդ վարչութեամք Հոգեւոր Խշանութեամ, եւ կառավարեսցէ զայն խորհրդարանն բաղկացեալ ընդ նուխագահութեամք Վիճակաւոր Արքեպիսկոպոսի առաջապես նոյն կռւսանոցի եւ ի չորից անդ ամոց ընտրելոցի հայազգի բնակչաց Տփիւսաց եւ հաստատեց ի Նայրագոյն Պատրիարք Կաթողիկոսն: Նմա ենթարկի տեսչութիւն ուսումնական մասին ընդ անմիջական հսկողութեամք խորհրդարանին»:

Ի անուէ գպրացի նորուն: Խորհրդարանին իւրաքանչիւր ամաց ընտրեացէ զմի յանդամոց իւրոց օգնական նախագահի, զի մի առ բացակայութեամբ նորուն ընդմիջեացի կարգ գործառնութեան խորհրդարանին: Ամենայն գործք խորհրդարանին վճռեացին ըստ բազմութեան ձայնիցն: Անդամոց ուրոյն ուրոյն ոչ է սեպհականեալ քմահաճ իշխանութիւն:

Գ. Զի յիշեալ չորեքին անդամքն խորհրդարանին ի կենդանութեան իմում յինէն նշանակեացին: Իսկ յետ մահուան իմոյ ընտրեացին յերիս ամսի ձեռն պատգամաւորաց ընտրելոց առ այս՝ յիւրաքանչիւր նուտգ ըստ առաջագոյն տնօրէնութեան վիճակաւոր Արքեպիսկոպոսին՝ ի ծխական ժողովրդինէ մայր Եկեղեցւոյն Վաճուց Եւ Եկեղեցեացն Մուզնուց եւ Բեթղեհեմի չորից անձանց իւրաքանչիւր ծխոց: Զանուցն ընտրեացէ խորհրդարանի Հայորերոց, որ ունիցի համապատշաճ կրթութիւն, եւ հաստատեացէ դնա Պատրիարք Կաթողիկոսն: Նմա ենթարկի տեսչութիւն ուսումնական մասին ընդ անմիջական հսկողութեամք խորհրդարանին»:

Դ. Վլխաւոր պարտաւորեալ առարկայից աւանդելոց ի գոլրոցին վերաբերին կրօնական ուսումնունք եւ պատմութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ լեզուք Հայոց Եւ Թուաոց: Ըստ չափուձեռն հասութեան գոլրոցին ընդարձակեցի եւ սահման կրթական ուսմանց եւ արուեստից: Առարկային տւանդեսցին ի Հայ լեզու: Ընդ ձրիավարժանուհեաց մարթին եւ մեջակաւորք

մուտ ի դպրոցն գտանել՝ համաձայն
կանոնաց որոշելոց առ այս ի խորհր-
դարանէն:

«Ե. Բացի վերոյիշեալ տանէն նուիրեմ
ես մշտնջենապէս ի տարին զերեք հա-
զար բուրլիս, այնու պայմանաւ՝ զի ձը-
րիավարժ աշակերտուհիք դպրոցին՝ ի
հաշիւ գումարի այսր պահպանեալք՝
անուանեսցին «Ցօնանեան Սանու հիք»:

« Զ. Զի երիցագոյնն յազգատոհմի ի-
մում ըստ արական սերնդոց վայելեացէ
զկոչումն հոգաբարձուի դպրոցին, եւ
ի լինելն նորին ի Տփխիս՝ կարասցէ ան-
դամակցիլ խորհրդաբանին՝ իրաւամբ
ձայնի։ Պարտաւորութիւն հոգաբար-
ձուին լիցի հոգալ զբարօրութենէ դրպ-
րոցին։ Առաջ առ առ առ առ առ առ առ

«Խոնարհաբար ենթարկեմ զայս ամենային ի գիտողութիւն Զերում Վեհափառութեան, եւ ընդ նմին՝ ունելով ի նկատի, թէ նուիրեալն յինէն տուն ընդ գետնոյն ունի զարժողութիւն աւելիքան զլաթսուն հազար բուբեաց՝ համարձակիմ խնդրել, զի համաձայն 1011-դ յօդուածոյ Ա. մասին ֆԱ.-դ. հատորոյ օրինաց (տպագրելոյ ի 1857 ամի) բարեհաճեսջլիք միջնորդել զբարձրագոյն կայսերական հաճութիւն յընդունել կուսաստանին՝ որ յանուն սրբոյն Ստեփաննոսի, զնուերն իմ ընդ վերոյգրեալ պայմանօք:

Ապաստան յարժանընկալ աղօթս Զե-
բոյին Վեհափառութեան

Պատիւ անծին համարիմ մնալ
Ասուուածաբեալ ջիւառն.

Աշխարհագիտություն

Digitized by srujanika@gmail.com

ԱՀաւասիկ Վեհ ։ Հայրապետի կոնդակը եւս։

«Վաեմափայլ եւ Ազգասէր Խշանի
Յովհաննու Յովնանեանց՝ բարեպաշտ
եւ հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս
Սրբոյ եջմիածնի եւ յաւէտ սիրելոյ մե-
րում նուիրեմք զողղոյն Քրիստոսաւանդ
եւ զօրչնութիւն Հայրապետական, մաղ-
թելով ի Տեառնէ մշտնջենաւորել ըգ-
գութ, եւ զողորմութիւն իւր ի վերայ
Զեր եւ ի վերայ բարեհամբաւ տանդ
եւ աղաջեմք զերեսս Բարձրելոյն Աս-
տուծոյ՝ Հաստատուն՝ անշարժ եւ ան-
փորձ պահել զհաւատ Զեր որ ի Քրիս-
տոս Յիսուս՝ ընդ Հովանեաւ ամենամա-
քուր եւ առաքելական Եկեղեցւոյ Հայ-
աստանեայցս եւ ընդ միութեամք ամ-
բողջութեան սիրեցելոյ Ազգիս, աճեցու-
ցանելով եւ ճոխացուցանելով զԶեղ եւ
զհամայն ընտանիս Զեր ցորչափ երեւին
աստեղք յերկինս եւ արեւ ի կամարն
եթերեան, եւ ծաղկեցուցէ զԶեղ եւ
զհամօրէն Յովնանեան գերդաստունն
բազմաբեղուն եւ բազմազգի պտղովք ա-
ռաքինութեանց եւ բարեմասնութեանց
բատ Հոգւոյ եւ բատ մարմնոյ: Ամէն:

« Ենոքհընդ Զեզ եւ ընդ ամենայն ընտանիսդ, սէր եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի սրբոյ Հոգւոյն ծաւալեսցի ի հոգիս եւ ի միտս Զեր, եւ պահեսցէ զեզ ի հաւատսա ամբիծս եւ ի ջերմեռանդն Աստուածավաշտութեան, առաւելեալ յամենայն գործս բարիս առ ի պոակել զամենեսեանդ երկնաւոր եւ երկրաւոր բարութեամբ։ Ամէն։

«Եւ ընդ Աստուածապարգեւ ողջունի եւ օրհնութեանս ծանուցանեմք սիրելի որդւոյդ մերում, զի գոհութեամբ բազմաւ հասու եղաք Աստուածահանոյ մը տաց եւ լուսաւոր խորհրդոյ Վաեմափայլ Խշանիդ համաձայն առաքինագործ կտակի արժանայիշատակ ամուսնոյ Զերոյ Մարիամու հանգուցելոյ ի Տէր, որով առ սէր բարեխնամ դաստիարակութեան հայագգի օրիորդաց քաղաքին Տփխեաց կամակար մոտօք հաճեալ է Զեր նուիրել յանուն եւ յօգուտ կուսանցի վանուց Ա. Ստեփաննոսի զտուն Զեր սեպհական այնու պայմանաւ, զի ի յիշատակ անուան եւ ի կատարումն կտակի հանգուցեալ Տիկնոջ Զերոյ Մարիամու հաստատեսցի ի նմա դպրոց օրիորդական, որ եւ յաւիտեան ժամանակաւ կառավարեսցի յատկացելովն առ ի Զէնջ երեք հազար ըուբլեաւ արծաթոյ, զոր յօժարեալ է Զեր ամի ամի հատուցանել յանխափան կառավարութիւն նորին՝ որպէս գրէք առ մեզ եւ ուխտէք ի գրութեան ձերում յուղղեալն առ մեզ ի 15-էն Յուլիսի տարւոյ»:

«Ապաքէն չեն ինչ պէտք յանդիման առնելոյ Վաեմափայլ Խշանիդ զբազմապատիկ ուսումնական եւ զբարոյական օդուտս, որք կարեն անշուշտ աղքերանալ յայդպիսոյ ազգաշահ հաստատութենէ, իբր զի Զեգէն քաջ ի միտ առեալ զբազմաբեղուն արգասիս սիրայօժար նուիրաբերութեանդ ի սեղան ազգային դաստիարակութեան, այդքանեաւ վառեալ գտանիք իրաւացի փութոյ պնդութեամբ առ վաղ ընդ փոյթիքագործութիւն խորհրդոյն՝ զոր վաղ

ուրեմն քաջ կշռեալ գոլով եւ մեր ըգկարեւորութիւն եւ զօգուտս հաստատութեան բարեկարգ դպրոցի իրիք առնթեր կուսանոցին յիշելոյ, զորմէ կախեալ գիտեմք զանխափան պայծառութիւն նորին, զայս միայն խնդրէաք ի Տեառնէ, զի հանգոյն Զեզ յարուցեալ յԱղգի մերում այր խոհական եւ հեռատես ըստ արժանոյն, պսակել կարացէ զվաղեմին տենչ ցանկութեան մերոյ, զոր Զեզ վիճակեալ էր ի Տեառնէ սոյնորինակ առատաձեռնութեամբ լնուլ եւ կատարել յօգուտ ազգի եւ եկեղեցւոյ Հայաստանեայց»:

«Յայն սակս աւասիկ զուարթամիտ ոգւով եւ լիայոյս վստահութեամբ փութամք յայտնել զհաճութիւն հաւանութեան մերոյ ընդ պայմանս հիմնական սկզբանց Դպրոցին արձանագրելոյ ի Զերումդ նախագծի, որոյ ի հաստատութիւն բերիմք սովին օրհնաձիր Կոնդակաւ, զի

«Ա. Ի նոյն տան, զոր նուիրէք յանուն եւ ի սեփհականութիւն կուսանաց Հայոց Անապատին Ա. Ստեփաննոսի որ ի Տփխիս, հաստատեսցի Դպրոց Հայկազն օրիորդաց՝ եւ ի յիշատակ ամուսնոյ Զերոյ անուանեսցի «Մարիամեան Յանանեանց Դպրոց օբիւրդաց»:

«Բ. Դպրոցն այն ենթարկեսցի միշտ ընդ վարչութեամբ Հոգեւոր Խշանութեան Հայոց, եւ կառավարեսցէ զայն խորհրդարանն բաղկացեալ ընդ նախագահութեամբ Վիճակաւոր Արքեպիսկոպոսի տեղույն՝ ի Մայրապետէ նոյն կուսանոցի եւ ի չորից անդամոց ընտրելոց առաւելութեամբ քուէից ի հայազգի ընակ-

չաց Տիփսինայի եւ հառատատելոց ի Ծպյ-
րագոյն Պատրիարք - Կաթոլիկոսէ ա-
մենայն Հայոց ընդ որս եւ ի տեսչէ նո-
րուն: Խորհրդարանն իսկզբան իւրա-
քանչիւք ամի ընարեսցէ զմին յանդա-
մոց իւրոց յօգնականութիւն նախագա-
հի զի մի առ բացակայութեամբ նորին
ընդմիջեսցի կարգ գործառնութեանց
խորհրդարանին: Ամենայն գործք խոր-
հրդարանին վճռեսցին ըստ բազմու-
թեան ձայնեցն: Անդտմոց ուրոյն ուրոյն
ոչ է ուրահականիքալ քմահաճ իշխանութ-
թիւն: Ճիմ ու ջարա ուրոյն մաստար

¶ Գ. Ցիշեալ չորեքին անդամքն խոր-
հըրդարանին՝ ի կենդանութեան Զե-
րում ընտրեսցին եւ նշանակեսցին ի
Զենց, իսկ յետ մահուան Զերոյ ընտրես-
ցին եռամեայ միջոցաւ ի ձեռն պատգա-
մաւորաց ընտրելոց ըստ այսմ գործոյ
յիւրաքանչիւր նուագի համաձայն կան-
խագոյն տնօրէնութեան վիճակաւոր
Արքեպիսկոպոսին՝ ի ծխական ժողովր-
դոց աւագ Եկեղեցւոյն Վանուց եւ Եկե-
ղեցեացն Մոլնոյ եւ Յեթղեհեմի ի չո-
րից անձանց նշանակելոց յիւրաքան-
չիւր Եկեղեցւոյ ծխականացն Զուեսուչն
ընտրեսցէ խորհրդարանն ի Հայորենոյ՝
որ ունիցի համապատշաճ կրթութիւն,
եւ հաստատեսցէ զնա Պատրիարք - Կա-
թողիկոսն ամենոյն Հայոց Տեսչին են-
թարկի վարչութիւն ուսումնական մա-
սնի Դպրոցի ընդ անընդմիջական Հսկո-
ղութեամբ խորհրդարանին այս մասնա

• 11. Φιλμωσερη υπαρκωσεορθεωτικης αποτελεσματικης εργασιας στην περιοχη της Αιγαίου θεραπευτικης απορροφησης.

զուք Հայոց եւ Առևտաց Բառ Հափու ձեւ-
ու ընհասութեան Դպրոցին ընդարձա-
կեսցի եւ սահման հանրակրթական ուս-
մանց եւ արուեստից Առարկայքն ա-
ւանդեսցին անշուշտ ի Հայ լեզու Ծնդ-
ձրիսվարժ սանու հետաց մարթին եւ թու-
շակաւորք մուտ ի գպրոցն գտանել հա-
մաձայն կանոնաց որոշելոց ի խորհրդ-
դարանէն ըստ այսմ պարբերութեան:
«Ե. Բաց ի տանէն նուիրելոյ ի Զէնջ՝
շնորհելով մշտնջենաւորապէս ամի ամի
զերեք հաղար բուբլիս արծաթոյ, եւ ի
հաշիւ այսր գումարի պահպանեալ ձր-
բիսվարժ աշակերտուհիք գպրոցին ա-
նուանեսցին «Հօնունեան Անուանիւ»:

9. Երիցագոյնն յազգատոհմէ Զերծէ
ըստ արական սերնդոց վայելեսցէ զի՞-
ւա՞ն հադաբարձուի Պապոցին, եւ ի լինե-
լոն նորին ի Տփխս՝ կարասցէ անդա-
մակցել Խորհրդարանին իրաւամբ ձայ-
նի Պարտաւորութիւն հսկաբարձուին
լիցի հսկալ զբարօրութենէ գպրոցին
առանց ունելոյ երբէք իրաւունոյ յեղա-
շրջելոյ զդպրոցն յայլ իմն դրութիւն
օտար:

«Հոււաստի եմք՝ զի «Մարդկանց է»» և
նաև Գլուխը՝ օրիորդական կանգ-
նեալ արձան անմռռաց յիշատակի եւ-
շնորհակալեաց ի սիրոտ Հայորեառյն Շ-
ձայն բերանալիր օրհնութեան երախ-
տաւօրելոցն առ ի ԶԵՆԾ որբ եւ աղքա-
տիկ օրիորդաց՝ զԲարձրելոյն Առաւեծոյ
ի վերայ Զեր աղքերացուցէ զանսպա-
խնամն շնորհաց առո եւ ի հանդերձե-
լումն. իսկ մեր եռանդեամբ հոգւոյ ա-
ռանձինն բաշխելով Զեղ դՀայրապետու-
թին առատաձիր օրհնութիւն մեր մազ-

թեմք ի Տեառնէ զիփուլին առատաձեռ-
նել Զեզ զփոխարինութիւն, զի քաջող-
ջիկ կենօք ընդ երկար վայելեսջիք զպաշ-
տոն խնամակալութեան Գովրոցին ի մը-
խիթարութիւն սրտի Զերոյ, եւ զհոգիս
բարեպաշտուհի կողակցին Զերոյ եւ
որդւոյդ սիրելւոյ եւ համայն արենակից
ննջելոց Զերոց ի Քրիստոս՝ արժանի ա-
րասցէ անպատում փառաց երկնից
սուրբ Արքայութեան:

«Ողջ լերժւք եւ օրհնեալք յԱստուծոյ
եւ յամենայն սրբոց նորա եւ ի մէնք
Ամէն»:

« Գրեցու կանոնին Հայոց պատմութիւնը յանձնէ Տեղան
հաւաքերդութիւնը՝ առաջին բարերդութիւնը եօթաւագերդութիւնը
և վեցերդութիւնը, և Հայոց ԱՅԻՍԻ է վեցութերդութիւնը առ
առ աշխան Գելատիներդիւնը, և Հայոց պատմութիւնը Ա.
Դաւա Հայութանեցու է Ա. Կըմենչիւնը և Վ. Պատրիարքիւնը:
թթ: թթ. 564:

ԴԱՎՐԻԺԵՆ ՆՊԱՍ.

Յանցելումս՝ պատերազմական անցից
պատճառաւաւ Հին—Պաեազիտէն եւ մեր-
ձակայ մի քանի գիւղերէն ի Պարսկաս-
տան Աալմաստ գաւառի Մակուայ կող-
մերը Եթէ+ հայէ-վի չափ Հայ գերգաս-
տունք դաղթած էին, որոց թշուառ վի-
ճակին թեթեւութիւն եւ միսիթարու-
թիւն տալոյ գեղեցիկ եռանդեամբ եւ
բարեգործութեամբ՝ Դավրիթաբնակմե-
րազնեայք եւ տեղական անգղիական
հիւպատոսի ձեռամբ Եւրոպացի գաղ-
թականներէն նշանաւոր անձինք՝ Գեր-
Առաջնորդ Անգլէաս Արքեպիսկոպոսի
հրաւէրը եւ յորդորը սիրալիք ընդու-
նիք են, եւ մի եօթնեկի մէջ 3626 Պարս-

ղուան (իբր 1084 ս-թւ. 15 կող.) նը-
պաստ հանգանակուեր է, զորս Գեր-
Առաջնորդն փութացուցեր է կարօտ
Հայոց մասնատրելու բատ արժանւոյն:

Յաջորդ թերթով յիշեալ Արքեպիսկոպոսի յայտարարութիւնը եւ նուիրատուաց ցուցակը հրատարակել արժանի համարիմք։ Տաղող մարտակարգ լուրջ մասնաւ

ԿՈՂՈՍԻ ԽՄԲՈ.ԳՐՈՒԹԵԱՆ.Ն ԿՈՂՄԱՆԵ. Ը
ԺԱԿՈՅ ՇՐՋԱԿԱՎՈՐՈՒՅԻ ՇԱՏԻ ԽԱՆՉՈՐԴՈՒՅԻ ՊՐ

Առաջն (Զայն) Ռուսերէն պատռական
լրագրի խմբագրութիւնն յանուն եւ ի
նպաստ գաղթեալ Բագրեւանդցի Հա-
յոց Եօնականունն և այս որը. 50 կոպ.
նուէր հանգանակեալ յղեց առ Վեհ.
Հայրապետ Ազգիս, որոյ համար յատուկ
շնորհակալութիւն կյայանեմք յիշեալ
լրագրի խմբագրութեան գովելով նորին
գեղեցիկ՝ բարի զգացումը եւ առաքի-
նասէր նպատակը.

Ախալքալաքցի Մեծարգոյ Պ. Ստեփաննոս Վարդանեան ի նպաստ ձեմարանի Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի եւ Քաղքեւանդցի գաղթեալ Հայոց հաւը-ը-բահան (ամենը 200) ուբէ. նուիրեց, որոյ համար յատուկ շնորհակալութիւն կյայտնեմք եւ կհրատարակեմք ի տեղեկութիւն մերազնէից՝ գովելով միանգամայն յիշեալ բարեպաշտ անձի ջերմեռանգութիւնը: